ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
09.09.2019Թ. ԿՆՔՎԱԾ N ՋԿ-ԳՀԾՁԲ-19/4-Տ-1
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐԱԿԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԱՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. Երևան <<30>> դեկտեմբերի 2019թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բագարանի Բարիք>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 09.09.2019թ. կնքված N ՋԿ-ԳՀԾՁԲ-19/4-Տ-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունները շարունակել մատուցել՝ համաձայն նախագծային փաստաթղթերի՝ ձմեռային դադարից հետո շինարարական աշխատանքները վերսկսելու դեպքում, համաձայնագրի կնքման միջոցով:

1.2 Պայմանագրի N 2 Հավելվածի <<900 000>> և <<250 000>> թվերը փոխարինել <<0>> և <<71 675>> թվերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի՝ մինչև համաձայնագրի կնքումը փաստացի ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	«Բագարանի Բարիք» ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հեռ. 093713204
Հ/Հ 900011028314	Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Կիևյան մ/ճ
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 11500498836200
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող	ՀՎՀՀ 02235628
	էլ. փոստ bagaranibariq@gmail.com
	տնօրեն
_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	_____ Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ. Տ.	Կ.Տ.